ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ԱՆԻՆ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ՀՌՉԱԿԵԼՈՒ 1050-ԱՄՅԱԿԻՆ

Նոյեմբերի 16-ին Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայում մեկնարկեց «Անին միջնադարյան Հայաստանի քաղաքական և քաղաքակրթական կենտրոն» խորագրով միջազգային գիտաժողովը, որը կազմակերպվել էր Անին Բագրատունյաց թագավորության մայրաքաղաք հռչակելու 1050-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումների շրջանակում: Գիտաժողովին մասնակցում էին հայագետներ, պատմաբաններ, լեզվաբաններ, ճարտարապետներ Հայաստանից, Ռուսաստանից, Ֆրանսիայից, Իտալիայից, ԱՄՆ-ից և Ավստրիայից:

Գիտաժողովի մասնակիցներին ողջույնի խոսք էին հղել ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը *և Ամենայն Հայոց կաթողիկոս* Գարեգին Երկրորդը*:*

ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը *բացման խոսքում անդրադարձավ հայ ազգի քաղաքական, մշակութային կյանքում, այդ թվում նաև ճարտարապետության, քանդակագործության բնագավառներում Անի քաղաքի ունեցած կարևոր դերին: Թեև այսօր Անին կիսավեր է և անմարդաբնակ, սակայն դարձել է թանգարան բաց երկնքի տակ՝ գրավելով հազարավոր զբոսաշրջիկների: Ներկայումս բազմաթիվ աշխատություններ կան Անիի մասին, սակայն նյութն այնքան բազմազան է և հարուստ, որ կարող է նորանոր ուսումնասիրությունների ու բացահայտումների աղբյուր հանդիսանալ:*

«Բագրատունյաց թագավորության մայրաքաղաք Անին ճարտարապետական ինքնատիպ հզոր համալիր է, քաղաք-հուշարձան, որով նա տարբերվում է բազմաթիվ այլ քաղաքներից: Միջազգային գիտական շրջանակներում Անին մեծ հիացմունք է առաջացնում, սակայն, ցավոք, ոչ միշտ է ընդգծվում նրա հայկականությունը: Հաճախ հուշարձանը ներկայացվում է որպես զուտ քաղաքակրթության դրսևորում՝ մոռացության տալով նրա ազգային նկարագիրը և էթնիկական կրողի հանգամանքը, ինչը չափազանց կարևոր է հայերի համար»,– նշեց ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանը *«ՀՀ»-ի հետ զրույցում:*

Գիտաժողովի մասնակիցներն իրենց զեկույցներում անդրադարձան ինչպես Անի քաղաքի պատմությանը, ճարտարապետությանը, քանդակագործությանը, խաչքարային մշակույթին, հոգևոր ժառանգությանը, այնպես էլ՝ համաշխարհային քաղաքական, մշակութային, քաղաքաշինության զարգացման գործում քաղաքի ունեցած կարևոր դերին:

Ավստրիայի Զալցբուրգի համալսարանի լեզվաբանության ինստիտուտի գիտաշխատող, Մայր-Մելնհոֆի անվան Քրիստոնյա Արևելքի ինստիտուտի հայագիտության բաժնի դասախոս, ՀՀ ԳԱԱ պատվավոր դոկտոր, հայագետ Յասմին Դում-Թրագուտի *խոսքով Անին համաշխարհային ժառանգության կարևոր մաս է կազմում, և անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել*

այն ավելի հայտնի դարձնելու համար: Օտարները շատ քիչ բան գիտեն Անիի իրական պատմության մասին, որովհետև Անի այցելող զբոսաշրջիկներին թուրք ուղեկցողները որևէ տեղեկություն չեն տալիս նրա հայկական լինելու մասին, այլ ներկայացնում են սխալ պատմություններ:

Գիտաժողովում նշվեց նաև, որ հայկական ճարտարապետությունը, մասնավորապես X–XI-րդ դարերում, իր ազդեցությունն է ունեցել եվրոպական ճարտարապետության վրա: Մոսկվայի ճարտարապետության և քաղաքաշինության պատմության գիտահետազոտական ինստիտուտի գիտաշխատող Արմեն Ղազարյանը, *կատարելով Անիի ու Տոսկանայի եկեղեցիների արտաքին կամարաշարերի համեմատական վերլուծություն, հստակ կապ է գտնում Հայաստանի և ռոմանական դարաշրջանի Իտալիայի կարևորագույն ճարտարապետական դպրոցների միջև: Սակայն Տոսկանայի տաճարներում կամարաշարերի առաջացումը կապված էր ոչ թե հայ վարպետների անմիջական աշխատանքի հետ, այլ, հավանաբար, Հայաստանի տարածքից գաղափարի տեղափոխման հետևանք էր:*

Գիտաժողովի աշխատանքներն ավարտվեցին նոյեմբերի 17-ին:

Լ. ՄԽԻԹԱՐՅԱՆ

«Գիտություն», նոյեմբեր, -11, 2011 թ.